



Տարեկան դիմել 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Маскъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարությունը ընդունվում է ամեն լիցուով:

Յայտարարությունների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-
մակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՎԻՐ-
ՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Մոռացված աշխատանքների մի դա-
սակարգ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 12 սեպտեմբերի

Ձեր պատուական լրագրի № 103 ներքին լու-
րերի բաժնում գետնորված էր Հաւաքարի Ս.
Մինաս եկեղեցու երեքսիտի Նաղար Ղազարեանի
խնդրով տպված մի «լուր», որով նա բացատրու-
թիւն է տալիս «Մշակի» 99 համարի մէջ տպված
այն լուրի դէմ, որտեղ ասված էր, որ նա իր ե-
րեքսիտանութեան վեց տարվայ ընթացքում ո-
չինչ հաշիւ չէ տուած և կօնսիստորիայից տուած
նուիրատուութեան երկրորդ մասեանը կորցրած է:
Պ. Նաղար Ղազարեան վկայ բերելով հաշիւտեա-
ներին և հաւաքարեւորութեան յանձնարարութեանց
յանձնաժողովին՝ պնդում է՝ թէ մինչև 1887
թվականի հաշիւները ներկայացրած է, չուտով
էլ ներկայացնելու է 1887 թվականի հաշիւ-
մատեանը: Հարկ եմ համարում պ. Ղազա-
րեանցին յիշեցնել, որ եկեղեցական հաշիւնե-
րը, որոնք նա ներկայացրել է, գուրկ են ա-
մենայն ճշգրտութիւնի և չեն կարող հաշիւ համար-
վել, որովհետև նրանց բանալին, որ է եկեղեցու
չխնութեան հաշիւը՝ թաղված է մովթ և խոր լա-
բիրինթոսի մէջ և յարուցում կառնի, դուցէ,
Քրիստոսի վերջին դաւաճանքը... եկեղեցու չի-
նութեան հաշիւն եմ ասում, որը հիմնադրված
է միայն բերանացի և առանկների արժանի լոյ
թարգմանական հաշիւների վրա, առանց մի
որ և իցէ գրաւոր ապացուցութեան և հաստա-
տութեան և լի գանազան միջին կողմերով, որոնց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՌԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՈՐԵՐԻ ՄԻ ԴԱՍԱԿԱՐԳ

Այս վերնագրով «Լիանսիպանին» հանդիսի
վերջին տետրակներից մէկում կարդացնէ Շարլ
Ժիլ ստորագրութեամբ մի յօդուած, նուիրված
կենդանիների պաշտպանութեան դատին:

Դեռ անցեալ տարի տեղական մի լրագրում
կարդում էինք կանտոնի համայնքից մի թղթակ-
ցութիւն, որով թղթակիցը հրաւիրում էր ուշա-
դուլութիւն դարձնել այն հանգամանքի վրա, որ այդ
համայնքում կլիմայի աղբեղութեան տակ սաստիկ
կոտորված էր լինում թռչունների և թէ անհրա-
ժեշտ էր անմիջապէս դուրս առաջն առնել: Հար-
կեալ էր կարգաւ թէ ինչպէս թղթակիցը
սրտաւարժ կերպով նկարագրում էր այդ «խեղճ»,
«անխնամ» թռչունների կոտորածը: Իսկ ներ-
կայ յօդուածը, որ մի առանձին սիրով թարգ-
մանելով առաջարկում ենք ձեզ, կուենայ,
յուսուլ ենք, իր բարեբար աղբեղութիւնը մեր
կենդանապահութեան գործի վրա:

Հեղինակը, Շարլ Ժիլ, մի յարգելի, նշանաւոր
տնտեսագէտ ուսումնական է: Մօնպէլիէի համա-
լսարանի իրաւաբանական բաժնի քաղաքատնո-
սագիտութեան պրոֆէսոր և միանգամայն անդ-
րանի խմբագիր և հիմնադիր «Revue d'Economie
politique» հանդիսի, նա վայելում է ներկայումս
նշանաւոր դիրք համանման ուղղութեամբ տնտե-
սագէտների շարքում, ինչպէս լավել է Բիլլիայում,

մասին ժամանակին կը խօսվի ի լուր և ի զգու-
շութիւն ամենքի, և այն ժամանակ լուսափայլ
կերևայ թէ ինչպէս «երեքսիտի» հաշիւտեա-
նուն կրող անձինքը, առանց հետամուտ զննողու-
թեան և «խաթրի համար» են ստորագրում մեր
եկեղեցական գումարների վրա, իբրև իրանց սե-
փականութեան վրա, իշխող երեսփոխանների խել-
քից ու բէնից փշված հաշիւները, այն ժամանակ
պարզ կը լինի ամենքի համար՝ թէ ինչպէս մեր
հայ խեղճ ժողովրդի ջերմուածնութիւնից գոյա-
ցած հայ եկեղեցիների գումարները դուրսխա-
լով, անձրևի առատ կաթիլներն նման թափ-
վում են երեքսիտանների զբաղմունքը և ար-
դաւանդ դարձնում նրանց կապալով վերցրած
հողը—հայոց եկեղեցիները Օրինակները, փառք
Աստուծո, սակաւ չեն և այս պատճառով էլ յու-
սով ենք, որ «առաջնորդական յանձնարարու-
թեանց յանձնաժողովը» էլ, երբ շարք կը հասնի
Ս. Մինասի եկեղեցու հաշիւների վերազննողու-
թեանը, կը վերադարձնի այդ մատենները հաշ-
ւատեսներին, որ նրանք պարզ հաշիւապահական և
առողջ դատողութեան հիմունքներով՝ նախ որո-
նեն սկզբնական գումարը և ապա հաստատեն
փոխանցումը. նախ կարգան ժողովրդի առաջ ե-
րեքսիտի հաշիւները, լսեն նրա յաւելմունքները,
որոնք կարող են լինել, և ապա ստորագրեն հա-
շիւները և այնուհետև հարստացնեն կօնսիստո-
րիայի արխիւը: Ժողովուրդն է արդիւնք տուող,
ժողովուրդն է ընծայաբերութիւններ անողը և
ամենայն մուտք եղած արդիւնքների մասին չեն
կարող տեղեկութիւն ունենալ հաշիւատեսները,
որոնք տարին երկու կամ երեք անգամ յաճա-
խում են եկեղեցի: Մեր հաշիւատեսների լոգիկա-
յով այսպէս է դուրս գալիս, որ եթէ պ. երեքսի-
տանը մատենի մէջ գրել է դիցուք թէ, տարվայ
մէջ ծախել է երկու ֆունտ մսով, ստացել է մի
բուրդի արդիւնք, հաշիւատեսները պէտք է լինին
հաւատան նրան և վաւերացնեն այդ հաշիւը, ո-
րովհետև գրված է մատենի մէջ և մուտքի մա-
սուում էլ նշանակեալ աշխատանքի պրոցէստից մի
քանի կօպէկ էլ աւելի է ցոյց տուած. հետեւապէս

Լըֆէլը Մնայիայում, Շառլէր Գերմանիայում, Մաքս
Վիլթ Աստորիայում, Վալթա Շվեյցարիայում, և
այլն: Կատարի կօպեկերատու, Շարլ Ժիլ կտրից իր
յարաբերութիւնը յետադէմ բուրժուազական էկօնո-
միայից և ներկայումս Ֆրանսիայում նոր շարժ-
ման դուրս, անցնելով սկսել է կարծես մի ա-
ռանձին դարձը հիմնել, իսկ ներկայ մայիս ամ-
սին էլ կարդաց Փարիզում մի պրնսիպի դասա-
խօսութիւն «կօօպեկերայի ապագայի» մասին:
Չը մոռանանք ասել, որ նա ունի նոյնպէս տըն-
տեսագիտութիւնից մի նշանաւոր ձեռնարկ
«Principes d'Economie politique»: Այս ուսում-
նական հետեւալ փորձի յօդուածն է, որ այժմ
պէտք է սկսէ կարդալ ընթերցողը:

Այս պ. Շարլ Ժիլի յօդուածը:

«Եւս ուղում եմ սրանով պաշտպանել մի առան-
ձին տեսակ աշխատանքները և վարձկանների
(salarie) դասակարգի դատը.—անհամար մի դա-
սի, որովհետև նրա անդամները հաշուում են մի-
լիօններով, թշուառական մի դասի, որովհետև
մի բան ստանալու համար, որպէս զի քաղցից չը
մեռնեն, նրանք ենթարկվում են ամենաանար-
խաւարի, դատապարտված շղթային և մտա-
կին.—մի դասի, որը այնքան աւելի կարօտ է
պաշտպանութեան, որքան անընդունակ է ինքն
իրան պաշտպանելու, որը չունի բաւական
գիտակցութիւն գործադուլ անելու և ունի
չափազանց բարի հոգի յեղափոխութիւն չանելու
համար: Եւ ուղում եմ խօսել կենդանիների և
մասնաւորապէս տնային կենդանիների մասին:

«Թվում է թէ մարդիկ-աշխատանքները պիտի
ունենային եղբայրակցութեան յայտնի կարեկից
զգացմունքներ զէպի անասուն-աշխատանքները,
զէպի այդ իրանց աշխատանքների և նեղութիւն-

և ջնորհակալութիւն պէտք է անել պ. երեքսի-
տին իր ջերմուածնի և եկեղեցաօգուտ աշխատան-
քի համար: Այս լոգիկան է անհ, որ ընդհանրա-
պէս աղքատացրել է մեր հայոց եկեղեցիները, և
այն աստիճանի հասցրել, որ մեր ծխական ու-
սումնարանները անապահով դրութեան են մատն-
ված, եկեղեցիների պարիսպները աւերակներ
են պատկերացնում և Աստուծո տաճարների շուր-
ջը լի է աղետալութիւններով և ասպակնութիւ-
նով:

Աւրախալի է այն լուրը, որ պ. երեքսիտի Ղա-
զարեան յայտնում է թէ՝ նուիրատուութեան մա-
տենը պ. Նաղար Արեանցի մօտ է. եթէ այդ
ձշմարիտ է՝ շատ ուրախ պէտք է լինեն Ս. Մի-
նասի ժողովրդականները, որովհետև այդ մատենը
անառակ որդւո նման կորած էր և գտնվեցաւ,
մեռած էր և կենդանացաւ:

Իսկ ինչ որ վերաբերում է այն վերջաբան ակ-
նարկութեանը, որ պ. Ղազարեան արել էր մի
քանի անձինքների վերաբերութեամբ, յիշելով
մանրամասն յակնել յանուանէ ինձ, որ անպար-
տաճանաչ գողով ի թիւս այլոց չեմ ներկայաց-
րած ցայսօր իբրև նուէր ստորագրված դումարը,
այդ մասին աւելորդ եմ համարում պ. Ղազա-
րեանցին արժանայնել պատասխանի, որովհետև
այդ առարկայի մասին Արիստակէս քահանայ
Բէնքերեանցի նամակին, որը տպված էր «Մշակի»
1883 թվականի 85 համարում, տուել եմ իմ
պարզ պատասխանը նոյն թվականի ապրիլի 20-ին
առանձին յաւելումով:

Պօղոս Գաթանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսից մեզ գրում են սեպտեմբերի 10-ից.
«Ձեզ լաւ ծանօթ դերասան Աղաման վաղը պի-
տի ներկայացնի «Օտելլո» պիէսան»:

Մեզ գրում են հետեւեալ Կ. Պօլսից. «Վենետի-
կի Միլիթարեան միաբաններն հ. Սահակ
վարդապետ Նաղարեթեան, երիտասարդ վարդա-

նների մէջ հյու-համեստ ընկերակցեցին: Բայց
հ. և կարծես, ընդհակառակը, նրանք որոնում
են ճակատագրի անարդարութեան վրէժը նրան-
ցից հանելու: Մեր երկրի հարաւում, դուցէ աւե-
լի քան թէ ուրիշ մասերում շատ անգութ են
դէպի անասունները և հէնց այս քաղաքում (Մօն-
պէլիէ), լաւ յայտնի է, որ եղջերի խաղաղաւար
կազմում է ժողովրդական գերագասելի դուար-
ճութիւնը և որ եղջերի և ձիերի արիւնը, խա-
ռը թափած խաղաղաւի սրահում, նման է
այն դրամին, որով գնվում են ընտրողական ձա-
յները»:

«Գէ՛ ռերմն. վստահ պէտք է ասել, քանի որ
աւելի երկար կը թաղաւորեն այդպիսի սովորու-
թիւններ, տեղիք չը կայ յուսալու, որ մարդիկ

*) Հարկաւոր է այս տեղը պարզել. մի տեղ
և զգուշել սովորութիւն է անացել բարբարոս
ժամանակներից դեռ մինչև հարաւային
Ֆրանսիայում և մասնաւոր Սպանիայում.
այն է կատաղի մենամարտութիւն բուրժուազների և
ձիերի մէջ կամ անասունների և մարդու մէջ.
վերջինը խստիւ արգելված է այժմ Ֆրանսիա-
յում, իսկ Սպանիայում դարձեալ կատարվում է
դեռ այժմ, որքան ինձ յայտնի է: Այդ բարբա-
րոս մենամարտ-խաղի մէջ պատահել է, որ եթէ
զրգուլած անասունը արիւնաբաւ լինելուց չէ ըն-
կնում և սպանվում, մարդն է շատ անգամ զոհ
կտացել անասունի կատաղի յարձակումին: Խաղի
ժամանակ անասունին զրգուլու, տաքացնելու
համար անխնայ ծակծակում են երկաթէ կամ
այլ սրածայր առարկաներով. առատ արիւնը
հոսում է ամֆիթատրոնում, իսկ ամբողջ դը-
ւարճանում է... Մնացեալ տարի այստեղ էլ տօ-
նախմբութիւնների ժամանակ եկել էին Ֆրանսի-
այի հարաւից, մամուլը աղմուկ հանեց այդ բար-
բարոս խաղի դէմ. թէ՛ն այդ խաղերը տեղի ու-
նեցան մի երկու անգամ, բայց անշնչաւ էին.
այցելող էլ զրեթէ չը կար. այն ժամանակ զրացի
թէ որքան դուրաւոր կերպով աղղում է այստեղ
մամուլը հասարակաց կարծիքի վրա:

պետ մը, լուսաւորչական եկեղեցին դարձաւ
Նոյնպէս մի քանի հայ հոռմաշխաններու համար
կը խօսուի»:

Սրանից մի քանի ժամանակ առաջ Երեւոյտո-
սում վախճանվեց հայազգի Թադեոս-փաշա ինչ-
պէս մեզ տեղեկացնում են, Թադեոս-փաշան կտա-
կել է 50,000 ռուբլի խմբի մէջ օրիորդական
դպրոց բանալու համար:

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալ նկատու-
ղութիւնը: «Ապտեմբերի 15-ին, Թիֆլիսի Վան-
քի եկեղեցու բազում, մենք առիթ ունեցանք
տեսնելու քաղաքի հայոց բոլոր դպրոցներին, թէ
տղայոց և թէ օրիորդական,—աշակերտներին և
աշակերտուհիներին միասին խմբված: Մենք ու-
շադրութեամբ հետեցինք հասարակ և միջին դա-
սակարգին պատկանող այդ երեխաներին, և այն
տպաւորութիւնը, որ մենք ստացանք, ընդհան-
րապէս շատ լաւ չէր: Թէ աշակերտները և
թէ աշակերտուհիները մեծ մասամբ ունէին թոյլ
կազմուածք, անառողջ դէմք, երկչոտ հայեացք,
ասիական ամաչկոտութեան յատուկ արտայա-
տութիւն, և չունէին այն աշխոյժ և ուրախ դէմ-
քերը և արտայայտութիւնը, որ յատուկ պէտք է
լինեն լաւ դպրոցների սաներին: Մենք մեր ձեռքի
տակ վիճակագրական տեղեկութիւններ չունենք,
որ կարող լինենք վճռաբար ասել, թէ քաղաքի
հայոց դպրոցների աշակերտուհիները և աշակերտ-
ները մէջ դպրոցական ձրայիսի հիւանդութիւնե-
րն են աւելի զարգացել, որոնք են այդ հիւան-
դութիւնների պատճառները, և թէ արդեօք դը-
րանց թողած այդ տեսակ տպաւորութեան պատ-
ճառը գլխաւորապէս դպրոցն է թէ ընտանիքը:
Ինչ և լինի, մենք մատնանիշ անկող իրողու-
թեան վրա, առանձին ուշադրութիւն ենք հրա-
ւիրում: Եթէ ընտանեկան պայմանները նպաստա-
ւոր չեն, ուրեմն դպրոցը աւելի ուշադրութիւն
պէտք է դարձնի երեխաների առողջութեան վրա,
կանոնաւոր մարմնամարզութեան և աշխատանքի
չափաւորութեան միջոցով: Եւ եթէ այդ երեխա-

յաջողին իրանց մի պարզ գաղափար կառմելու
թէ ինչ է արդարութիւնը, դեռ ոչ էլ կարողա-
նային նրանք իրագործելու այդ արդարութիւնը
իրանց հասարակական յարաբերութիւնների մէջ:
«Եւ թող սրա վրա ուսերը չը բարձրացնեն ա-
սելով թէ այլ է արդարութիւնը դէպի մեր
նմանները և այլ է դէպի անասունները: Ար-
դարութիւնը մէկ է, միակ ամենքի համար:
Խրաքանչիւր էակ այս աշխարհում, միակ
այն բանով որ զգում է, որ չարարվում է, որ
աշխատում է,—ունի իրաւունքներ և իրաւունքներ
որոնք նուիրական են: Առաւել ևս արդարացի է
այդ, երբ խօսքը այն արարածների մասին է, ո-
րոնք իրաւ կազմում են ընտանիքի անբաժանելի
մասը, որովհետև նրանք տան բարեկամներն են,
օջախի հիւրերն են:

«Մեր նորարդին լեզուները ունեն մի գեղեցիկ
խօսք, որը հներին անմասօթ էր կամ թէ գոնէ
նրանք նոյն նշանակութեամբ չէին գործածում.
այդ խօսքն է մարդկութիւն: Նշանակութիւնը
նախ սեղմված, սահմանափակ, փոքր առ փո-
քը ընդարձակվեց և այդ տեղմնի առաջին-
թաց ընդարձակութիւնը ցոյց է տալիս և չա-
փում է արդարութեան գաղափարը դարգացու-
մը այս աշխարհում. յաջորդաբար ներմուծեցին
այդ դարգացման մէջ այն ամենքին, որոնք ա-
ռաջ թողնված էին դուրսը. ստորակը, որը մի իր
էր միայն, օտարացան, որի անունը սինոնիմ
էր թշնամուն, կինը, որ վայելութեան գոր-
ծիք էր միայն: Բայց կայ դարձեալ մի քայլ
անելու և ինչպէս տարօրինակ էլ երևայ ա-
ռաջին հայեացքից այսպիսի մի կարծիք՝ պէտք
է յայտարարել, որ անասունները նոյնպէս կապ-
մում են մարդկութեան մասը:

Գիտնականները աշխատում են մեզ ցոյց տա

ները ընդհանրապես անհրաժեշտ էր ևս ազատ և կանոնադրաբար դատարարական լինելու, դրա հակառակ դեպքում իր վերին աստիճանի սերտությամբ, համարձակություններով և պոլիտիկական խստություններով հեռու դատարարական լինելու պետք է ներշնչել երեխաներին մեջ մարդավայել համարձակություն և աշխույժ ու կենդանի բնավորություն սեփական յատկությունները»

ԱՍԽԱՅԻՍՏԻՑ մեզ գրում են՝ «Ամսիս 10-ին, դիշերը, ժամը 3-ին ու 35 րոպեին, Ախալցխայում դռները եղան երկրաշարժի բաժանման աստիճանի հարուած: Այնուհետև հարուածները կրկին-վեցան սեպտեմբերի 11-ին և 12-ին ժամը 21/2-ին կեսօրից յետոյ, բայց այս վերջին դարկերը թույլ էին»

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են՝ «Կիրակի, ամսիս 11-ին, տեղիս սրբազան առաջնորդը շրջակայ գեղերի համար 4 քահանայ ձեռնադրեց, որոնցից երեքը, ցանկով պետք է ասենք, բաժանման տղան անձինք են: Արքայանը մեզ մոտ իր գալու օրից մինչև այսօր ձեռնադրել է արդեն 14 քահանայ»:

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ, որ այդ քաղաքի փոստատուները այս օրերս տեղափոխվել են քաղաքի ծայրը, ուր անկարմար է դնալ քաղաքացիներին, մասնաճյուղ վատ եղանակին և ցեխ ժամանակ: Թղթակցի կարծիքով փոստատան գլխավորը պետք է աւելի մտածել ժողովրդի, քան թե իր անձնական յարմարությունները մասին»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են հետևեալը՝ «Մարեր գնացող թափառական թուրքերի ձեռքով յափշտակված հայ աղջիկը, որի մասին նորերումս հաղորդել էինք (Մշակում), այժմ վարչություն կարգադրություն չնորհով ազատված է յափշտակողների ձեռքից և կրկին յանձնված է իր ծնողներին»:

ԱՐԴԱՆԱՆԻ մեր թղթակցը հաղորդում է մեզ հետևեալը՝ «Սեպտեմբերի 10-ից սկսած այստեղ անդադար թե՛ դիշեր և թե՛ ցեղեր՝ կրկնվում են երկրաշարժի հարուածներ և երկրաշարժի հետեւանքներից երկիւղ կրելով, չը նայելով ցուրտ եղանակին, բնակիչները շատերը և նոյն իսկ գիւնուորները դուրսն են գնում գիշերը երկրաշարժը այնպէս սաստիկ է եղել, որ մի քանի տներ քանդվել են: Արդահանից ոչ հեռու դառնով Գեօլա անունով գիւղումն էլ մի քանի տներ երկրաշարժից քանդվելով, ասում են մինչև 15 անձինք մնացել են բնակարանների վրիկուց: Այսօր սեպտեմբերի 14 է, և երկրաշարժի թե՛ն թոյլ հարուածները դեռ ևս շարունակվում են»:

Լու, որ կենդանիները մեր եղբայրներն են բառի բուն նշանակութեամբ, կամ առնուադն մեր ազգակիցները, այն մտքով որ մենք ծագում ենք, մի ընդհանուր նախահօրից և թե՛ ուրեմն մի և նոյն արիւնը հոսում է մեր երակներում: Ճշմարիտն ասել այս արկունակությունը ըստ երևոյթին չէ ներշնչում մեր գիտականներին մեջ ջնջելու զգացումներ: Դա նրանց չէ խանգարում ենթարկելու մեր այդ անբաղդ արևնակիցներին ամենատարաբան խոսքերին...:

«Նս գեռ լաւ հաւատացած չեմ թերեւս որ այս վարդապետութիւնը կատարելապէս հաստատված լինի: Բայց ինչ որ լաւ գիտեմ—սա ինձ հերիք է,—այդ այն է որ նրանք մեր եղբայրներն են աշխատանքի և ներութեան մեջ անուծելի ընկերակցութեամբ, մեր եղբայրները՝ ամենօրեայ հացը հայթայթելու համար հանրային կուսի համերաշխութեամբ»:

«Թե՛ մարդիկ ծագում են թե՛ ոչ անասուններից, մի և նոյն է, միշտ իրականությունն այն է, որ նախ քան մարդու երկրի երեսին երևալը, կենդանիները նրանից առաջ արդէն այդտեղ գոյութիւն ունէին: Կենդանի արարածներ մեծ ընտանիքում, նրանք մեր անդամներն են, առանց նրանց օգնութեան, երբեք գործերս առաջ չէինք կարող տանել: Նրանք կարող էին առանց մեզ անցկացնել, իսկ մենք չէինք կարող առանց նրանց ապրել: Առանց ձիւ և շան, որոնք միջոց տուին մարդուն որը որտալու կամ հօտերը պահելու, առանց եղան, որը նրան միջոց տուեց հողը մշակելու և այդպիսով հողագործութեամբ ճանապարհ բանալու նրան դէպի քաղաքակրթութիւնը, երբեք ի հարկէ մարդը չէր կարող անցնել առաջագիտութեան առաջին փուլը: Նա կը լինէր դեռ այս ժամին այն աստղալիկների ընկերների սոսկա-

«Արեւելքի» մէջ կարգում ենք: «Կը հաղորդեն մեզ թե՛ տիկին Մատական յառաջիկայ հոկտեմբերի 1-ին կը բանայ վերջնապէս իր Մանկապարտէզն ի Գառը-գիւղ: Տիկինը հարկ եղած կարսիներն ու պիտոյնքն արդէն յանձնարարած ըլլալով մասամբ աստ և ի վիճինա, մօտ օրերս պիտի կահաւորէ իր այդ հաստատութիւնը, որ եղական է իր տեսակին մէջ: Գառը-գիւղի դարգացեալ դասն ի սկզբանէ անտի շատ համակիր գտնված է տիկինը սոյն ձեռնարկին» և բազմաթիւ ծնողներ կը հրճուին մտածելով որ իրանց զաւակները այլ ևս չը պիտի ստիպվեն յանձնել վարպետ տնտեսներու խնամոց»:

Մեզ գրում են ԱՐԴԱՆԱՆԻ սեպտեմբերի 14-ից հետեւեալը: «Ամսիս 11-ին, կիրակի օրը, տեղիս բանտի մէջ բանտարկվածներից մի քանիսներին դուրս են բերում մաքրելու այն կամուրջը, որի վրա սովորաբար ժողովուրդը դրօսում է, ուրիշ դրօսարան չը լինելու պատճառով: Այդ ժամանակ բանտարկվածներից մէկը, յարմար րօպէ գտնելով՝ փակցում է և մինչև այժմ նրան չը կարողացան ձերբակալել»:

ՇՈՒՇՈՒՑ պատմանքներ մէջ, ինչպէս մեզ գրում են, սովորութիւն է դարձել դրպանում միշտ աւերճանակ պահել: Այսպէս անցեալ օրերս շուշեցի մի պատանի, խաղաղով ատրճանակի հետ, անդրուշտեամբ արձակում է ատրճանակը և վերաւորում է իր ընկերոջը:

Պարսկաստանից մեր ստացած մամուլում համահայրերից իմանում ենք, որ այս տարի ցորենը Պարսկաստանում բաժանում թանգ է: Լաւ ցորենի լիւրը ծախվում է 15 շահի (75 կօպէ): Պարսկազաղ դաւառում բերքը բոլորովին փչացել է և այդտեղ զիւղացիք պետք է դարձնեն, քանի որ ցորեն այդտեղ ամենեւին չը կայ:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են: «Խաղողը այստեղ սաստիկ թանկացել է, քանի որ այգիների մեծ մասը վնասվել է թ ող առված հիւանդութիւնից: Այժմ այստեղ ոչ թե՛ միայն փող ունեցողները, բայց և անփող մարդիկ պարտքով դուրսը ձեռք բերելով, վերջին կօպէի չեն խնայում թանգ գնով խաղող առնելու, յուսալով որ զինքն շատ կը թանկանայ, ուրեմն զինքն պատրաստել ձեռնառու գործ կը լինի այս տարի: Այդպիսով բերքը (27 վեղո) առնելով 80—120 րուբլիով, դարձեալ յոյս ունեն շահ ունենալու, հաւատացած լինելով թե՛ առնուադն 150 րուբլիով կը ծախեն բերքը: Մեր կարծիքով սխալ հաշիւ է դա»:

Լի զրկանքի մէջ, որոնք կերակրվում են հողով և գուցէ մինչև անգամ այն խեղճ անասուններից էլ ստոր, որոնք նրան առաջ մղեցին և որոնց վրա նայում է նա այսօր բարձրագոյն հպարտութեամբ: Այդ անասուններն են, որոնք իրանց մտով մեզ մատակարարեցին առաջին կերակուրները, իրանց կաշիով և ըրդով մեր առաջին հագուստները, իրանց ոսկրներով և եղջիրներով մեր առաջին զենքերը: Գեռ այս ժամին, ամենապարզ ինչ որ ունենք՝ նրանցից է որ դարձեալ կորչում ենք: Մերի, անկար և մրկան, մենք խելցինք նրանց աղուամաղը մեզ հաղցնելու համար, նրանց մորթիւն մեզ տաքացնելու համար, նրանց միտաքը մեզ զարդաւելու համար: Թշուառական օտարութիւնը որ մենք էինք, նրանցից կաշին հանցինք մեզ համար ոտնամաններ պատրաստելու: Մացառի ետեւ թաղկացած աւաղաների նման կողոպտեցինք նրանցից ամեն բան ինչ որ ունէին իրանց վրա, մեր մարմինը ծածկելու համար, մենք նրանց պարտական ենք ամեն բան, նրանք մեզ ոչինչ չեն պարտական:

«Վհա ինչու, եթէ ծառայութիւնների փոխադարձութիւնը դուր խօսք չէ, կենդանիները իրաւունք ունեն մեր գիթութեան,—սա չէր չէր չէր ասել, նրանք իրաւունք ունեն մեր արդարութեան,—իսկ այդ էլ հերիք չէ դեռ... նրանք իրաւունք ունեն մեր յարգանքի...»

«Թոյլերն պաշտպանելու ոյժի զիջումները, չար գործողութեան դէմ մինչև այժմ երկու միջոց միայն գիտենք. օրէնսդրութեան միջամտութիւնը, կամ թոյլերի միմեանց մէջ ընկերակցութիւնը: Ինչ վերաբերում է օրէնսդրութեան, նա սկսել է միջամտել ի նպատակ այն թոյլերի, որոնց մասին է այստեղ խօսքը, թէ՛ն բաժանում թոյլ կերպով: Grammont ասված օրէնքը, որը պատ-

կիրակի օր, ամսիս 18-ին, ինչպէս դեռ սրանից համարեա մի ամիս առաջ էլ յայտարարված էր, պետք է կատարվէր Թիֆլիսի Գառնիցից եկեղեցու նոր երեցփոխի ընտրութիւնը այժմեան երեցփոխ Աքիմիանի փոխարէն: Բայց այդ ընտրութիւնը չը կայացաւ, որովհետեւ, ինչպէս սրբազան առաջնորդը եկեղեցում յայտնեց, վեհափառ կաթողիկոսը հրամայեց յետաձգել նոր երեցփոխի ընտրութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻՍԻՑ

Կ. Պօլիս, 10 սեպտեմբերի
Նախ երկու բառով հաղորդենք երէկի պատրիարքական ընտրութեան արդիւնքը: Երէկ 92 երեսփոխան քուէ տուին, մին ոչնչացաւ, և մնաց 91, և ըստ օրինի 46 քուէ ստացող եպիսկոպոսը պիտի հռչակուէր Պատրիարք հայոց: Բայց ոչ մի ստացաւ այդ բացարձակ առաւելութիւնը: «Մշակի»-ի ընթերցողը արդէն գիտեն թէ այս արդիւնքը պիտի արտադրէր երէկի նիստը, վասն զի այսպէս էր իրաց վիճակը մի քանի ամիս է վեր և մինչ ալ ըստ այնմ պարզած էինք: Վուհներն այսպէս բաժնուեցան. Բարթողիմէոս եպիսկոպոս 39 քուէ, Խորէն Նար-Պէյ 36 քուէ, Ալեքեան Խորէն 11 քուէ:—Խորիմեան Հայրիկ 3 իւմբիլեան Մատթէոս 1: Միւրթարեան Խորէն 1: Նար-Պէյ սրբազանի ընտրութիւնը երէկ գրեթէ ապահովեալ կրնար համարուիլ, եթէ երկու դէպքեր առաջ եկած չըլլային: Նախ այս է, որ հինգ երեսփոխանք ջերմապէս Նար-Պէյականք բացահայտ դառնուեցան երէկի նիստին, բացակայութիւն մը, որ անբացատրելի մնաց: Երկրորդ Նար-Պէյեան կուսակից և կուսակցութեան պարագլուխներէ մին Պ. Սրվաճեան, առնադպր Գաղ. Ժողովուրդ և Առեւտրային «Արեւելքի» վարչութեան, շարաթէ մը ի վեր փոխուած էր: Պ. Սրվաճեան վերջի օրերս համոզում գոյացուցած ըլլալով թէ կուսակցութիւնը պիտի չը վաւերացնէ Նար-Պէյի ընտրութիւնը և թէ ազգը երկար ժամանակ անխախտական վիճակի պիտի մատնուի, այս պատճառաւ հարկ դառնց դոնկ Նար-Պէյն և դառնալ Ալեքեանի կողմն, և որովհետեւ պ. Սրվաճեան վստահութիւն կը ներշնչէ, հետեւեալ կարող եղաւ իրեն հետ տանել դէպի Ալեքեանի խումբը: Հինգ-վեց երեսփոխանք, ահա այս պատճառներով Նար-Պէյ սրբազան կարող չեղաւ մեծամասնութիւն ստանալ, և ուղիղն ըսելով եթէ ստանար իսկ, դէպքն արտաքոյ կարգի պիտի համարուէր, վասն զի բոլոր մեր հաշիւները ցոյց կուտային

ժում է անային կենդանիներին հետ վատ վարմիւլու դէպքում, թէ՛ն յաճախ ծիծաղելի և թեթեւ պատիժներով, կը մնայ դարձեալ 19-րդ դարի պատաւարած գործերից մէկը և գուցէ նա հերիք կը լինի յետագայ սերնդի օղակաւորութիւնները կենդանու համար: Ինչ վերաբերում է ընկերակցութեան (association), կենդանիները չը կարողանալով ինքնապաշտպան ի կատար ածել և դեռ վարժված չը լինելով կազմել արհեստական ընկերակցութիւններ *), նրանց բարեկամներին ուրեմն կը վայելէր ստեղծել մի այդպիսի ձեռնարկութիւն նրանց պաշտպանելու համար. և արդարեւ հէնց այդ էլ արեցին նրանք. և այդպէս ստեղծվեց կենդանիներին հովանաւորող ընկերութիւնը,—դարձեալ ծաղրել մի ուրիշ առարկայ սահմանափակ խելքերի համար: Ինչ փոյթ, նա ներկայացնում է մի մեծ գաղափար...:

«Նս լաւ գիտեմ թէ ինչ առարկութիւններ են, որ չեն պաշտպան անել: Ասում են, նախ քան կենդանիներով զբաղվուլ, դեռ շատ բան կայ անելու այն մարդիկների համար, որոնք տանջվում են: Գուր երեսակալում էք գուցէ որ նրանք, որոնք այդպէս են խօսում, այնպիսի մարդատէրներ չեն, որոնք ասում են միայն զբաղվելով իրանց մեծամտությամբ և չէին կարող դոնէլ իրանց ժամանակից մի րօպէ և մի երկու կօպէլ իրանց քաղաքի յօգուտ մի խեղճ անասունի:—Ընդհակառակն, այդպիսիները մեծ մասամբ այն մարդիկն են, որոնք իրանց նմանի համար էլ աւելի չեն չինում, քան և մի շան համար և խղճի կատարեալ անզգաստութեամբ չեն զբաղվում ոչ սրբանցով, ոչ էլ նրանցով: Պէտք է ասել ընդ-

*) Յարգելի պրօֆէսորը երազում է և կենդանիների մէջ կօպերացիա, որի պարագլուխ է հանդիսանում, ինչպէս յիշեցինք վերև:

թէ հաղիւ 40-ի պիտի մօտենայ Նար-Պէյի թիւն և այնպէս ալ եղաւ. գրեթէ նոյնն է Բարթողիմէոսի համար:

Վերջնական ընտրութիւնը պիտի կատարուի յաջորդ ուրբաթ, 16 սեպտեմբերի: Այդ օրը քուէարկութիւնը միայն երկու անուններու վրա է, Բարթողիմէոս և Խորէն Նար-Պէյ, այս երկուքն որը որ ամենէն աւելի քուէ ստանայ, պիտի հռչակուի Պատրիարք հայոց, իսկ եթէ քուէներն հաւասար ըլլան, վիճակ կը ձգուի, և վիճակն որուն որ ելլէ նա է Պատրիարքը:

Այդ վերջնական ընտրութեան օրը բոլոր երեսփոխանք ներկայ գտնուելու պարտական չեն, այլ բացակայները կարող են իրենց քուէները պահաւանի մէջ դնելով խրկել Ազգ. Ժողովուրդ: Այս օրինակ քուէարկութիւնը բացառութիւն է միայն պատրիարքական ընտրութեան համար:

Երկուքն որը պիտի ստանայ քուէներու մեծամասնութիւնը, մեր հաշիւներուն նայելով հաւանական Նար-Պէյ սրբազանը կը թուի. բայց երկուքն որն ալ ըլլայ փոքրիկ տարբերութեամբ պիտի լինի: Հաշիւներն այսպէս կրնանք ընել: Երէկուան նստին Նար-Պէյի և Բարթողիմէոսի տրուած քուէներն միասին 75 էին. այդ գրեթէ ապահովեալ է որ ոչ Նար-Պէյի 36 քուէներէն մին, ոչ Բարթողիմէոսի 39 քուէներէն մին պիտի փոխուի. ուրեմն ասոնք անփոփոխ մնալով պետք է մտածել թէ միւս քուէներն ինչ պիտի ըլլան: Երեսփոխաններու թիւն 120 է, ուսկից զեղչելով 75-ը կը մնայ 45, և այս 45-էն պետք է որ 21 քուէ Բարթողիմէոս ստանայ և 24 Նար-Պէյ, որպէս զի հաւասար ըլլան քուէներն, երկուքն ալ 60-ական քուէ առնուին: Պիտի ըլլայ:

Որո՞ք պիտի տան Նար-Պէյին: Հինգ երեսփոխանք որ բացակայ էին, բայց Նար-Պէյական են, այդ հինգ քուէներն ապահով են. Խորիմեան Հայրիկի համար տուած երեք քուէներն ալ ապահովաբար Նար-Պէյի կուտան. Ալեքեանի կուսակիցներէ մի մասն ալ, մօտաւորապէս եօթը քուէ Նար-Պէյի համար են, հետեւեալ Նար-Պէյ սրբազան իր 36 քուէին վրայ 15 քուէ ևս աւելցնելու ապահովութիւնն ունի, այնպէս որ զալ նստին կրնանք գուշակել թէ 50—51 քուէ կայ Նար-Պէյի համար: Իսկ Բարթողիմէոս եպիսկոպոս կրնայ գրաւել Ալեքեաններու քուէին մի մասն և երէկ բացակայ գտնուող երկու կամ երեք ուրիշ երեսփոխանի քուէն. այնպէս ցը 10 կամ 12 քուէ ինք կրնայ ստանալ և կըլլայ 50—51: Կը մնան անդին քանի մօտ երեսփոխանք, որոց քուէն վրձնական պիտի լինի, բայց այդ երեսփոխաններն ալ շատ հաւանական է, որ չէզոք մնան, ոչ մի-ոյն, ոչ միւսին կողմն ըլլան, այնպէս որ խնդրել մէկ երկու քուէներէ կախում ունենայ:

հակառակը որ եթէ սովորեցնէին, օրինակ, մանուկներին կենդանիներին սիրելը, դա ամենալաւ միջոցը կը լինէր նրանց սովորեցնելու սիրել ապագայում թոյլերին և զրկածներին: Դէ ի հարկէ մեր առաջին պարտքն է սիրել մեր նմանին, ով է մտածում հերքել այդ թայց մեր նմանը միշտ չէ այնպէս սիրելի, ոչ էլ այնպէս հրապուրելի: Եւ ահա թէ ինչու ամենալաւ միջոցը ուսանելու մարդիկ սիրել, հարկաւոր է դեռ սկսել կենդանիներ սիրելով:

Աւելորդ են մեր կողմից որ և է կօմմենտարիաներ:

Այս կարգաւով էլ ընթերցողը դարձեալ ևս մի անգամ գուցէ կը համոզվի, որ բարձր գիտութիւնը և նրա անկեղծ և հաւատարմ ծառաները արտայայտում են զօրեղ պաշտպանութիւն և միշտ սէր դէպի թոյլերը և չարախաղները: Սակայն չենք կարող այստեղ անուշաղբութեամբ անցնել մի կէտ, ով եղել է Եւրօպայ՝ Շվեյցարիա, կամ Ֆրանսիա, թէ՛կուղ սրա հարաւային մասում, նա համոզված կը լինի անուշտ թէ ինչպէս ընդվում անասունների հետ. ինչ կասէր յարգելի ուսումնական պրօֆեսորը եթէ տեսնէր մեր կողմի աւելի թշուառական և ողորմելի էշերի, եղբրի կամ ձիերի վրձնակ...:

Ցանկալի կը լինէր թերեւս միւս թերթերը նոյնպէս արտայայտել յարգելի պրօֆեսորի այս յօդուածը. մասուլը ևս իր կողմից գէթ փոքրով նպաստած կը լինէր արդարեւ այս զրկված «մոռացված աշխատատեղերի մի դասակարգի» բարոյութեան...:

Ժընէվ. Վարաջ.

գոնները մի քանի ասպակները փշրվեցան:
ՐՈՍՏՈՎ, (Գոնի վրա) 18 սեպտեմբերի: Երեկ
երեկոյան Նոյա կայսերական Մեծութիւնները
Թագաւոր կայսրը և Թագուհին կայսրուհին անցան
Բոստովով: Կայսրանում կանգ առան 1/4 ժամ:
Թագաւոր կայսրը ընդունեց աղ ու հաց Բոստով
և Տագաւոր քաղաքները: Կայսրուհին ներկա-
յացրին ծաղիկ փնջեր: Կայսրանը, քաղաքը և նա-
ւերը չքեղ կերպով լուսաւորված էին: Հարկը
հաղարկեց բաղկացած ժողովուրդը զիմաւորեց և
ճանապարհ գցեց Օդեսսայի: Գոնաւորները
լին անվերջանալի չուրայով:

ՓԱՐԻՉ, 18 սեպտեմբերի: Պատգամաւորները
ժողովին նստաւրջանը վերանորոգելիս, մինիստրու-
թիւնը կը ներկայացնէ սահմանադրութեան վերա-
քննութեան համար մի նախագիծ, որը վերաբերում
է միմիայն սենատի իրաւունքները կարճելուն
Ֆինանսական գործերում և նրան տուած իրա-
ւունքները զրկելուն ժողովը լուծելու վերաբեր-
մամբ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՄԱ

Սեպտեմբերի 16-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	92 ր. 40
Համբուրգի վրա 100 մարկ	45 > 30
Փարիզի վրա 100 ֆրանկ	36 > 50
Ռալի	7 > 55
Մաքսային կուպոններ	149 > —
Արծաթ	1 > 15
Բորսային դրամներ	7 > 89/0
Պետական 5% տոմս 1-ին շրջանի	98 > —
— — — — — 2-րդ	94 > 75
— — — — — 3-րդ	94 > 25
— — — — — 4-րդ	95 > —
— — — — — 5-րդ	94 > 75

— — — — — 6-րդ	79 > 50
Նոր 4% փոխառութիւն	94 > —
Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ.	94 > 25
— — — — — 2-րդ	94 > 25
— — — — — 3-րդ	94 > 25
Ներքին 5% առաջին փոխառութիւն	251 > 50
— — — — — երկրորդ	231 > —
5 1/2% բէնտա	100 > —
Ռալիայի բէնտա	167 > 50
Եթերոք կոնսոլիդացած փոխառու- թիւն	139 > 50
Նոր երկաթուղային բէնտա	95 > —
5% գրաւական թղթեր կալուած	— > —
— — — — — 142 > —	— > —
— — — — — 89 > —	— > —
— — — — — 95 > 50	— > —
5 1/2% գրաւական թղթեր խնայողի կալուած բանկի	96 > 87
6% գրաւակ. թղթ. Խարկովի կալ. բան.	102 > 50
— — — — — Պոլտավայի	100 > —
— — — — — Պետ. Տուլայի	100 > —
— — — — — Կիւի	101 > —
— — — — — Մոսկվայի	100 > —
— — — — — Բեսարաբ. Տուլայի	101 > —
— — — — — Նիժ. Սամար.	100 > —
— — — — — Վիլնայի	62 > —
— — — — — Թիֆլիսի—27 և 43 տ.	97 > —
— — — — — Կուրսայի—18 և 43 տ.	97 > —
Վ. օլժակո-Կանսկի բանկի ակցիաները 603	— > —
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. բնկ.	227 > —
Բիւրնակ-Բոլոգոյի բնկ.	78 > —
Ս. Պետերբուրգի քաղաքային օգու- ղացիաներ	90 > 12
Մոսկվայի քաղաք. օգուղացիաներ	— > —
Օդէսայի	91 > —
Թիֆլիսի քաղաք. կրեդ. բնկ. օգու	82 > —
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամրանում է:	— > —

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ւ Ի Ն Ն Ե Ր

ՀԱՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԵԳՈՐԾԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԱՆ

ձեռագործի և ձևի ուսումնարանը բացվում է սեպտեմբերի 22-ին: Ընդունվում
են ծխական ուսումնարաններում ուսումնաւարտած օրիորդները:
Սերգէեւսկի փողոց, Շահպարտեանի տուն:
1—3

ԿԵՕԼԵՐԵԱՆ ԽԻՆԱՅԻՆ ԶՈՒՐ

Գլխի վրա եղած թիւի ոչնչացնելու և մազերը ամրացնելու համար: Իւրաքանչիւր գնող
շուտով կը գնահատէ նրա գեղեցիկ ներգործութիւնը և առաւելութիւնը այդ տեսակի բոլոր
ուրիշ արդիւնքների:
Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր առևտրականների մօտ. Մոսկվայում—Բ.
ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլայայա փողոցի վրա:
№ 4. II. K. O. (2—3)

ԿԵՕԼԵՐԻ ԿԱԶՈՒՆՅԻՆ ՆՊՐԵՏՈՒՐԱ

Այդ կաշուային արդիւնքայով, որը առանց ինքնագովութեան կարող եմ գերազանց անուա-
նել, շուտով և յարմար օժկում են կօշկանքի փոխանակ՝ կօշիկներ (մանաւանդ կանանց), սակ-
ւիւթներ, ձիու սարքեր, կառքեր և այլն, սե փայլ տալու նրանց, և նոյնպէս խոնավութիւն
լանցիւններ և կաշուին մեծ ամրութիւն տալու համար: Իր օգտակար յատկութիւններով այդ
յարմար է գործածել իւրաքանչիւր տնտեսութեան մէջ. արդէն այն բանը, որ կանանց կօշիկ-
ների համար կօշկանքի փոխանակ գործածվող արդիւնքները չէ մրոտում սպիտակեղէնը ու-
շագործեան արժանի է և իրաւունք է տալիս նրան ընդարձակ կերպով տարածված լինելու:
Հիշելի մեծութիւնը, չը նայելով էժան գնին, կրկնակի է, արտասահմանեան չդիւանդլակ՝ ա-
նուանված շիշերի հետ համեմատելով:
Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր առևտրականների մօտ. Մոսկվայում—Բ.
ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլայայա փողոցի վրա:
№ 4. II. K. O. (2—3)

ՆՈՒՆԵՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Զ Ա Ն Յ Հ Ա Մ Ա Ր

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթու-
թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով
Հմուտ Հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:
Աւանդելի առարկայք սորա են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրա-
կան Թուղթերութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-
յին), 4) Թուղթերութիւն Համրիչի վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6)
Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն, և 7) գեղարդութիւն:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի
15-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր Հիմնողի բնա-
կարանում: Սոյսկում, Լաբորատորիայա փողոցի վրա, № 11: Իսկ օգոստոսի
20-ից Աշէրանդր Փրիգոնովի տանը, № 9 Սերգէեւսկայա և Նազարնայա փողոց-
ների անկիւնում: Գեղարդական դիմաց, ուր օր անցնելու են կուրսերը: Մարզերը ու
կանոնները կարելի է ստանալ ՁԻՒԱՊԵՍ եղբ. Մովսիսեանների բանկային գրասե-
նակում և կուրսեր Հիմնողի բնակարանում: Օտարաբաղաճացիք զիմում են
կուրսերի Հիմնողին.—ВЪ ТИФЛИСѢ, С. П. Мануэляницъ.
16—20 (Ե. Շ.)

„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԶԻ“

Նոր տպագրութիւնները

- 1) Երկրորդ տարի՝ երկրորդ տիպ, Հիմնովին փոփոխած: Պարունակում է
100-ից աւելի նոր յօդուած, և բաղկացած է 144 երեսից: Գինն է 35 կօպէկ:
- 2) Զորրորդ տարի՝ երրորդ տիպ, ճիւղացրած: Պարունակում է 60-ից ա-
ւելի նոր յօդուած, և բաղկացած է 308 երեսից: Երկրորդ տիպը բաղկացած է 272
երեսից: Գինը առաջկանն է՝ 60 կօպէկ:
- Գումարով առնողներին 20% զիջում: Յօդուածները զիմողները ճանապարհածախս
չեն վճարում:
- Երրորդ տարի՝ (նախկին) երրորդ տիպ, գինն է 40 կօպէկ: Մտնում է միայն
զրափաճառանոցներում:
- Երրորդ տարի, „Тифлисъ, Авлабаръ. учителю Ованесу Назарянцъ“.
4—4 (Ե. Շ.)

ՀԱՅՈՒՆԵԿԸՐԻ

Թ Ի Յ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի

91-ն Սեպտեմբերի 1888

Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բազուի բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազուի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առձեռն թղթադրամ).....	92,288—61	81,333—93	173,622—54	1. Հիմնական դրամադրու.	1,000,000 —	— — —	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	456—74	250,000 —	250,456—74	2. Պահանջի դրամադրու.	154,474—72	— — —	154,474—72
3. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստո- րացրութեամբ.	2,855,133—28	862,594—78	3,717,728—06	3. Դրամական աւանդներ՝ ա) Պայմանաժամով	1,756,143 —	110,114 —	1,866,257 —
4. Զեղչումն մուրհակաց մէկ ստորագրու- թեամբ, ապահոված ապրանքներով.	15,500 —	— — —	15,500 —	բ) Գ'Պահանջ.	242,516 —	10,020 —	252,536 —
5. Զեղչումն առկուսաբեր թղթ., կտրու. և այլն.	20,086 87	2,723—50	22,810—37	գ) Ընթացիկ հաշիւով հասարակ.	751,727 54	523,518 81	1,275,246—26
6. Փոխառութիւն գրաւականով՝ ա) Պետութիւնից ապահ. առկուսաբ. թղթերի. բ) — — — — — ոչ ապահ. — — —	1,043,195—73 187,624 —	221,785 — 13,000 —	1,264,980—73 200,624 —	դ) — — — — — պայմանաւոր.	— — —	118,517—60	118,517—60
գ) ապրանքների	— — —	79,800 —	79,800 —	4. Զեղչումն մուրհակաց պետական բան- կայի թիֆլիսի բաժնում.	322,545—06	— — —	322,545—06
դ) Ռալայ և արծաթի	— — —	46,400 —	46,400 —	5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետական բանկայի թիֆլիսի բաժնում, ապահոված մուրհակներով և առկուսաբեր թղթերով.	547,000 —	— — —	547,000 —
7. Բանկի պատկանաւ առկուսաբեր թղթեր.	297,584—13	22,017—12	319,601—25	6. Թղթակցներ՝ ա) Նոյա հաշիւը (Loro).....	3,388,998—57	— — —	3,388,998—57
8. Ոսկի և արտասահմանի փոխանակադրեր.	39,409—31	3,888—55	43,297—86	բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	6,751,523—24	— — —	6,751,523—24
9. Թղթակցներ՝ ա) Նոյա հաշիւը (Loro).....	3,583,998—55	— — —	3,583,998—55	գ) Բանկայի հաշիւը կինտրոն. վարչութ. հետ. .	— — —	935,520—74	935,520—74
բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	6,268,802—21	— — —	6,268,802—21	դ) Բանկայի հաշիւը կինտրոն. վարչութ. հետ. .	177,585—85	— — —	177,585—85
10. Բաժնի հաշիւը կինտրոն. վարչութեան հետ. կինտրոն. վարչութեան հաշիւը բաժնի հետ.	934,463—64 — — —	— — — 184,197—54	934,463—64 184,197—54	8. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրու- նների բաշիւը 1882, 83, 84, 85, 86 և 87 թթ.	5,941—71	— — —	5,941—71
11. Բողոքուած մուրհակներ.	— — —	— — —	— — —	9. Զը վճարուած առկուսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ գործողու- թեանց.	65,805—14	12,751—52	78,556—66
12. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւն- ներ.	10,200 —	4,050 —	14,250 —	10. Ստացուած առկուսներ և յանձնարարա- կաններ	163,955—71	68,995—31	232,951—02
13. Ընթացիկ ծախսեր.	31,436—85	10,302—45	41,739—30	11. Փոխանցիկ գումարներ.	68,963—44	6,811—76	75,775—20
14. Կահկարասիք և սկզբնական ծախսեր.	3,461—51	3,009—77	6,471—28				
15. Ցեա տնտեսուիլը ծախսեր.	13,538—46	1,147—10	14,685—56				
Բ. Ա.	15,397,179—89	1,786,249—74	17,183,429—63	Բ. Ա.	15,397,179—89	1,786,249—74	17,183,429—63